«ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

Հաստատում եմ՝ Ա. Գրիգորյան

Քննարկվել և հաստատվել է
Չարենցավան պետական քոլեջի
տնօրինական խորհրդում
« 21 » փետրվարի 2018թ. թիվ 5 նիստում

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ»ՊՈԱԿ-ի ԶԻՆՂԵԿԻ

Ք.ՉԱՐԵՆՑԱՎԱՆ

2018թ.

ԶԻՆՂԵԿԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻՆ, ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԵՐԻՆ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1) զինղեկի պաշտոնն զբաղոցնողը պետք է իմանա ստորև նշված նորմատիվ իրավական ակտերի այն դրույթները, որոնք վերաբերում են կրթության բնագավառին և կանոնակարգում են պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները.

ա. <<Կրթության մասին>>, <<Զինապարտության մասին>>, <<Զենքի մասին>>, <<Կրթության պետական տեսչության մասին>>, Հայաստանի Հանրապետության օրենքները, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը, քոլեջի կանոնադրությունը

բ. <<ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն>>, <<Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր>> առարկաների չափորոշիչների և ծրագրերի պահանջները, իր պաշտոնային պարտականություններին վերաբերող՝ նախարարության համապատասխան նորմատիվ ակտերը, իրավական այլ փաստաթղթեր,

գ. մանկավարժության տեսության և մեթոդիկայի, հոգեբանության, առաջին բուժօգնության հիմունքները,

դ. աշխատանքի անվտանգության, սովորողների կյանքի և առողջության պահպանման կանոնները:

3. Որակավորման պահաջները՝

1) զինղեկի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) կամ միջին մասնագիտական կրթություն, պահեստազորի սպայի կոչում:

Ուսումնական հաստատության տնօրենը զինղեկին նշանակում և պաշտոնից ազատում է տարածքային զիկոմիսարիատի հետ համաձայնեցնելուց հետո:

ԶԻՆՂԵԿԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1) պլանավորում և իրականցնում է ուսանողների ուսուցումն ու դաստիարակությունը՝ <<ՆԶՊ և անվտանգ կեսագործունեություն>>,

<<Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր>> առարկաների չափորոշիչներին համապատասխան և ղեկավարում է ռազմական գործն ուսումնասիրող խմբակների աշխատանքը.

2) ուսումնական հաստատության ղեկավարության և մանկավարժական կոլեկտիվի հետ համատեղ իրականացնում է ուսանողների ռազմահայրենասիրական դաստիարակությունը, պլանավորում և իրականացնում է ուսանողների ուսուցումն ու դաստիրակությունը <<ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն>>, <<Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր>> առարկաների չափորոշիչներին և ծրագրերին համապատասխան.

3) հաշվառում և պահպանում է ուսումնական զենքը, փոքր տրամաչափի հրացանները, դրանց փամփուշտները՝ համաձայն << Զենքի մասին >> ՀՀ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների.

4) ֆիզիկական կուլտուրայի դասխոսի հետ միասին կազմակերպում է բազմամարտի և քաղպաշտպանության նորմատիվների ցուցանիշների հանձնումը.

5) ուսանողներին մասնակից է դարձնում հրաձգության, ռազմակիրառական մարզաձևերի ու քաղպաշտպանության համայնքային, մարզային, հանրապետական մրցումներին, սպարտակիադներին և այլ միջոցառումներին.

6) ապահովում է շեֆություն ստանձնած զորամասերի, այլ ձեռնարկությունների, կազմակերպությունների հետ համագործակցությունը՝ ՆԶՊ դասավանդման որակը բարելավելու նպատակով.

7) աջակցում է զինկոմիսարատին՝ պատանիներին զինվորական ուսումնական հաստատությունների ընդունվելը նախապատրաստելու համար, օգնում կուրսղեկներին նախապատրաստելու նախազորակոչային տարիքի պատանիների փաստաթղթերը և ապահովում նախազորակոչային հաշվառումը, նրանց կցագրումը զինկոմիսարիատին.

8) համագործակցում է ուսումնական հաստատության մյուս մանկավարժների, ուսանողների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝

ուսանողների կրթության կազմակերպան և ընտանեկան դաստիարակության հարցերում.

9) կուսղեկի, վարպետների հետ համատեղ կազմում են նախազորակոչային տարիքի այն սովորողների բնութագիրը, որոնք ենթակա են գրանցվելու զորակոչային տեղամասում.

10) համագործակցում է գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով.

11) մասնակցում է տնօրինական, մանկավարժական/ ուսումամեթոդական / խորհրդի նիստերին.

12) սահմանված կարգով ստանում է զինվորական համազգեստ և այն կրում աշխատանքի ընթացքում:

Զինղեկը ենթարկվում է քոլեջի տնօրենին և անմիջականորեն պատասխանատու է ուսանողի << ՆԶՊ և անվտանգ կենսագործունեության>>, << Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր >> առարկաների դասավանդման, փոքր տրամաչափի ու դրանց փամփուշտների հաշվառման, պահպանելու և բաց թողնելու, հրազենով պարպմունքներ անցկացնելիս սահմանված կանոնների և անվտանգության միջոցառումների խստագույն պահպանման համար:

Զինղեկի աշխատանքը կարգավորվում է դասացուցակով, միջոցառումների պլանով, որը անց է կանցվում դասաժամերից դուրս, քոլեջի տնօրենի կողմից հաստատված նրա անհատական պլանով:

Զինղեկը քոլեջի ռազմահայրենասիրական խորհրդի նախագահն է:

Քոլեջի ռազմահայրենասիրական խորհուրդը վերակազմավորվում կամ լուծարվում է տնօրենի հրամանով և ձևավորվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա սկիզբին: